«...Մաշթոցն ավելի քան արժանի էր, որ երախտապարտ սերունդը գիտենար նրա կյանքը և նշանավոր հղացման մանրամասնությունները ... Սերունդների միշտ արթուն զգացումը, միանգամ. ստացած ժառանգությունը պահելու անդրդվելի կորովը բացատրելու է և՛ նրանով, որ նա սրբագործված է եղել հայ լուսավորության ամոլների սրբազան աջով»

Ն. Ադոնց

«...Մեսրոպ Մաշտոցի գյուտը, անտարակույս, այն հզոր զենքն էր, որի շնորհիվ հայ ժողովուրդը պահպանեց իր գոյությունը V դարի մեծ պայքարում. և, մտնելով քաղաքակրթված հնագույն ժողովուրդների ընտանիքի մեջ, զարգացրեց իր ինքնուրույն մշակույթն ու շատ հարուստ գրականությունը»

Հ. Մանանդյան

«...Մաշտոցը, բացի քրիստոնեություն և հայկական դպրություն տարածելուց՝ շատ տեղերում. հաստատում. է վանքեր, ինչպես Գողթնում, Սյունիքում... Մաշտոցի ու Սահակի ու նրանց աշակերտների ջանքերով ստեղծվում. է եկեղեցական հայերեն լեզուն, որ ընդունվում. է երկու կողմերի հայերից՝ և արևելքում, և՛ արևմուտքում: Դրա հետևանքով ևս պահվում. է միությունը հայերի մեջ միշտ և ամենուրեք: ...Այդ լեզուն դառնում. է, ուրեմն, ազգային միության մի գործոն»:

Մ. Աբեղյան

«...Այբուբեն ստեղծելիս գլխավոր նվաճումը եղել է ոչ թե գրանշանների գյուտը, այլ զուտ այբուբենային կարգի ներդրումը, որտեղ յուրաքանչյուր հնչյուն արտահայտվում է միայն մեկ գրով»:

Դ.Դիրինգեր

«...Երբ մենք քննում ենք այն պայմանները, որոնց մեջ Մաշտոցն ու Սահակն իրենց մտքի ուժով հայ ժողովրդին եկեղեցական ու ազգային ինքնագիտակցության զարթոնքի հասցրին, և այս ամենը համեմատում ենք այն դանայական պարգևի հետ, որը Ֆրանկ Պիպինը, քաղաքական ու եկեղեցական իշխանության բոլոր միջոցներն իր ձեռքն ունենալով, ընծայեց գերմանական ժողովրդին՝ տեսնում ենք, որ Պիպինը և նրա զինակից Վինֆրիդը ողորմելի թզուկներ են երևում մտքի այս երկու հսկաների հանդեպ»:

Յ. Մարկվարտ

«...Չճշգրտված հարցերը թող հետազոտեն գիտնականները: Սա ամենևին չի խանգարում մեզ, որ ուրախությամբ միանանք հայերի ազգային տոնին և ջերմորեն շնորհավորենք՝ ինչ բոլորի համար որոշակի է, իրական է ու ճշմարիտ. հայերը, վրացիների պես, ունեն իմաստությամբ կազմված այբուբեն, որով ստեղծված է ազգային հարուստ դպրություն, որը 15 դար ու կեսի պատմություն ունի: Այս ազգային դպրությունը անցյալում հայերին միավորող ուժ էր՝ ազգային կերպարի պահպանման համար թշնամիների հետ կռվելիս: Այդպիսի ուժ կմնա այն նաև ապագայում»:

Ա. Շանիձե (1962 թ.)